ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108–րդ հոդվածի1–ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ **գրավոր միջնորդության տեսքով**: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Սույն գործով, նկատի ունենալով, որ հայցվոր «Դիիմ Քոմյունիքեյշնզ» ՍՊԸ-ի կողմից նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը՝ 100.000 ՀՀ դրամը, միաժամանակ արձանագրելով, որ տվյալ դեպքումբացակայում է **գրավոր միջնորդությունը**՝ դատական ծախսերի հետ կապված,Դատարանը գտնում է, որ դատական ծախսերիհարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀքաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «ԴիիմՔոմյունիքեյշնզ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀվարչապետի աշխատակազմի՝ հայտերի գնահատման վերաբերյալ որոշումը,հայտերի գնահատման արդյունքների և զբաղեցրած տեղերի վերաբերյալ որոշումը, «Դոպինգ»ՍՊԸ-ին գնման ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումնանվավեր ճանաչելու, մասնակիցների հայտերի նոր գնահատում կատարելունպարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի.

անվավեր ճանաչել ՀՀՎԱ-ՀԲՄԾՁԲ-25/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 10.07.2025 թվականի թիվ 04 արձանագրության՝

- 3.1 կետով ՀՀՎԱ-ՀԲՄԾՁԲ-25/3 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման վերաբերյալ որոշումը,

- 4.1 կետով ՀՀՎԱ-ՀԲՄԾՁԲ-25/3 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքների և զբաղեցրած տեղերի վերաբերյալ որոշումը,

- 5.1 կետով «Դոպինգ» ՍՊԸ-ին գնման ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը,

Հայցը՝ մնացած մասով, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
Վճիռըկամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am